ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 210 – Ա
16 սեպտեմբերի 2014 թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը գնահատող մշտական գործող մարզային հանձնաժողովի աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով մարզի Ճամբարակի քաղաքապետի կողմից ստեղծված հանձնաժողովի կողմից ս/թ սեպտեմբերի 4-ին մարզի Ճամբարակ քաղաքում տեղացած կարկտի հետևանքով ազգաբնակչությանը հասցված վնասների չափերի մասին կազմված ակտերն ուսումնասիրելու համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Զոհրաբյան Արմեն - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ, խմբի ղեկավար

Մելքոնյան Գուրգեն - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

Սարգսյան Արտակ - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի գլխավոր մասնագետ

2. Աշխատանքային խմբին՝ սեղմ ժամկետում ավարտել ուսումնասիրությունը և ակտերը ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը գնահատող մշտական գործող մարզային հանձնաժողովին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ